ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 փետրվարի երեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

19
(3050)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ԱՎԵԼԱՆՈՒՄ ԵՆ

Գյումրիում մարտին կայանալիք ընտրությունները աչքի են ընկնելու թեկնածուների բազմազանությամբ, քաղաքականացվածությամբ: «Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ նաեւ Հայաստանի եվրոպամետ ուժերն են պատրաստվում մասնակցել ընտրություններին՝ Լեւոն Բարսեղյանի գլխավորությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արամ Սարգսյանի «Հանրապետություն» կուսակցությունը եւս մտադիր է մտնել ընտրապայքարի մեջ, իսկ առաջնորդող թեկնածուն կլինի Գյումրու լրագրողների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը: Սակայն ինքը՝ Բարսեղյանը, լսելով, որ լրագրող է իրեն անհանգստացնում, անմիջապես ասաց, թե զբաղված է՝ հնարավորություն չտալով իրենից մեկնաբանություններ ստանալ: «Ժողովուրդ»-ը զրուցեց «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ Անի Խաչատրյանի հետ, ով ասաց, թե Գյումրու ընտրությունների հարց դեռ չեն քննարկել, երբ վերջնական որոշում ունենան՝ կհայտարարեն այդ մասին: Բայց եւ չհերքեց, որ մտադիր են մտնել ընտրապայքարի մեջ:

Այսպիսով, եթե ամփոփենք, Գյումրիում կայանալիք ընտրություններին ոչ միայն տեղական նախկին ու ներկա իշխանություններն են պայքարելու, այլեւ տարբեր կուսակցություններ են հայտ ներկայացրել քաղաքական ներկապնակը Գյումրիում փոխելու համար:

Հիշեցնենք, որ հայրաքաղաքում ավագանու խմբակցություն ու նաեւ քաղաքապետ ունենալու համար պայքարելու են ՔՊ-ի ժ/պ Սարիկ Մինասյանը, Գյումրու նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանը, ԱԺ պատգամավոր Մարտուն Գրիգորյանը, Անդրանիկ Թեւանյանի եւ Սուրեն Սուրենյանցի ուժերը, պրոդյուսեր Ռուբեն Մխիթարյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս շարքը էլի կհամալրվի թեկնածուներով:

Բայց առայժմ նկատելի է, որ ՔՊ-ն ամենաագրեսիվ պայքարը տանում է Ռուբեն Մխիթարյանի դեմ: Ընդ որում՝ եւ քրեական եւ քաղաքական դաշտում:

«Մարտի 1-ի» գործը եւ սպանությունները բացահայտելու համար իշխանության եկած Նիկոլ Փաշինյանը ոչ միայն մինչ օրս չի բացահայտել այդ գործը եւ միայն արձան է դրել «Մարտի 1-ի» խորհրդով, այլեւ նրա ԱԳ նախարարը պարգեւատրել է մի պաշտոնյայի, որը մարտի 1-ի քաղաքական էջը փակել է նախորդ իշխանությունների համար: Նորվեգիա կատարած պաշտոնական այցի շրջանակներում փետրվարի 7-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Եվրոպայի խորհրդի նախկին գլխավոր քարտուղար, Նորվեգիայի նախկին վարչապետ Թյորնբորն Յագլանդի հետ եւ նրան պարգեւատրել ՀՀ Պատվո շքանշանով: Պաշտոնական հաղորդագրության մեջ կարդում ենք, որ Յագլանդը, շքանշանը ստանալուց հետո, մասնավորապես, հայտարարել է, թե «Մենք շատ աշխատեցինք ձեզ հետ՝նոր օրենքներ եւ նոր պրակտիկա ստեղծելու, եւ այս ամենը Եվրոպայի կանոններին հարմարեցնելու համար»: Իսկ ինչ է արել, ինչ նոր օրենքներ ու պրակտիկա է ստեղծել ԵԽԽՎ նախկին գլխավոր քարտուղարը: «Ժողովուրդ» օրաթերթը հիշեցնում է, որ Յագլանդը ԵԽԽՎ գլխավոր քարտուղար էր Հայաստանի համար ծանր ժամանակներում, երբ ՀՀ-ում արտակարգ դրությունից հետո վտանգված էր խոսքի ազատությունը, տասնյակ քաղբանտարկյալներ կային ՀՀ բանտերում, երբ Երեւանի կենտրոնում սպանվել էր 10 քաղաքացի, իսկ ԵԽԽՎ նախկին գլխավոր քարտուղարը խոսում էր նոր պրակտիկա ստեղծելու, եւ դա Եվրոպայի կանոններին հարմարեցնելու մասին: Հիշեցնենք, որ 2011 թվականի հունվարի 18-ին Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգի այցի ժամանակ նրան Երեւանի «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի դիմաց վանկարկումներով ու բողոքի ակցիաներով էին ընդունում, քանի որ նրա գործողություններից օրվա ընդդիմությունը դժգոհ էր: Դժգոհ էր, որովհետեւ նույն Թյորնբորն Յագլանդը եւ նրա ղեկավարությամբ ԵԽԽՎ մյուս ներկայացուցիչները փաստացի փակեցին մարտի 1-ի արյունալի իրադարձությունների քաղաքական էջը:



Նախորդ տարվա աշնանը պետությանը նվիրած «Ռենջ Ռովեր» մակնիշի ավտոմեքենան, որի մասին 14 ամիս անց Նիկոլ Փաշինյանը հպարտությամբ հայտարարեց, թե հատիկ առ հատիկ թալանը վերադարձնում է, իրականում չի բռնագանձվել, այլ քաղաքացին նվեր է տվել պետությանը: Հիշեցնենք, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքն Ազգային ժողովի ՔՊ խմբակցությունն ընդունել է 2020թ. ապրիլի 16-ին, որը ուժի մեջ է մտել նույն տարվա մայիսի 23-ին: Հիմա ՀՀ դատախազությունը այս օրենքի հիման վրա հայցեր է ներկայացնում դատարան, որտեղ կայացնում են վճիռներ այս կամ այն ապօրինի գույքի վերաբերյալ: Իսկ Փաշինյանն էլ դա համարում է «թալանի վերադարձ»: Թեեւ կոնկրետ այդ ավտոմեքենան ոչ թե վճռով է բռնագանձվել, այլ նախկին պատգամավոր Միհեր Սեդրակյանի՝ «Թոխմախի Միհերի» քրոջ փեսան ինքն է նվիրել պետությանը: «Ժողովուրդ» օրաթերթը մասնագիտական հանրույթից ահազանգեր է ստանում այն մասին, որ իրականում դատախազությունը իրավական ճանապարհով չի կարողանալու բռնագանձել որեւէ ապօրինի գույք: Իսկ եթե նույնիսկ բռնագանձի, ապա քաղաքացին, ումից որ բռնագանձել են, իր բողոքարկումներով այդ գույքի արժեքից մի քանի անգամ ավելի փոխհատուցում է ստանալու հետագայում ՀՀ պետբյուջեից: Իսկ ռեգրեսիվ հայցով այդ վճիռը կայացրած դատավորից ու հայցը պաշտպանած դատախազից քաղաքացին կարող է նաեւ ստանալ իր գույքը խլելու փոխհատուցումը: Մանրամասն բացատրությունը՝հաջորդիվ:

ՔՊ-ականների մի խումբ Արսեն Թորոսյանի գլխավորությամբ շարունակում է Անահիտ Ավանեսյանին պաշտոնից հեռացնելու ուղղությամբ օրուգիշեր աշխատել: «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ Անահիտ Ավանեսյանը ուրբաթ օրը փակ հանդիպում է ունեցել ՔՊ-ականների հետ: Մեզ որոշ մանրամասներ են հայտնի դարձել փակ հանդիպումից: Այսպիսով, նախ տեղեկացանք, որ քիչ թվով ՔՊ-ականներ են ներկա եղել հանդիպմանը, որոնք խայթող հարցեր են ուղղել Ավանեսյանին, եւ նպատակ են ունեցել ցույց տալու, որ վերջինս չի տիրապետում իրավիճակին: Փակ հանդիպմանը հիմնականում քննարկվել է առողջության համապարփակ ապահովագրության ներդրման ծրագիրը, բայց իրական նպատակը եղել է «նեղը գցել» Ավանեսյանին ու Փաշինյանի մոտ ցույց տալ, որ Ավանեսյանը անարդյունավետ նախարար է ու պետք է հեռացվի: Անահիտ Ավանեսյանի դեմ ջանասիրաբար աշխատում է հատկապես Արսեն Թորոսյանը (նա վերջերս նշանակվեց ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ), ինչպես նաեւ հանձնաժողովի մյուս անդամները: Չնայած սրան՝ՔՊ-ից մեզ փոխանցում են, որ Նիկոլ Փաշինյանն այդքան էլ հակված չէ հեռացնելու Ավանեսյանին, քանի որ նրան համարում է «հնազանդվող ու ենթարկվող» նախարար, որը երբեք չի հակաճառում իրեն: Բայց Արսեն Թորոսյանը, կարծես թե, երազում է վերադառնալ նախարարի աթոռին:

ԻՄՊԻՉՄԵՆԹ ԿՀԱՅՏԱՐԱՐԻ

ՈՎ Է ԱՂԱՋԱՐՅԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Ազգային ժողովի պատգամավոր Հովիկ Աղազարյանը, ով վերջերս նոր կուսակցություն հիմնեց, նոպատակ ունի առաջիկայում Նիկոլ Փաշինյանի հրաժարականի գործընթաց սկսել: «Ժողովուրդ»-ի տեղեկություններով՝ Աղազարյանը այս օրերին տարբեր հանդիպում-քննարկումներ է ունենում իր նորաստեղծ կուսակցության ներկայացուցիչների հետ, որ անվստահության գործընթաց սկսի:

«Ժողովուրդ»-ը զրուցել է Հովիկ Աղազարյանի հետ՝ պարզելու նրա առաջիկա ծրագրերը:

-Պարոն Աղազարյան, կան տեղեկություններ, որ Դուք պատրաստվում եք իմպիչմենթ սկսել Նիկոլ Փաշինյանի կապակցությամբ. կամ նման հարց Ձեր օրակարգում:

-Ես չեմ ցանկանում հրապարակայնացնել իմ առաջիկա պլանները:

-Բացառո՞ւմ եք, որ ԱԺ-ում նման գործընթաց կնախաձեռնեք:

-Շատ անսպասելի հարց տվեցիք, բայց պատասխանը նույնն է՝ իմ պլանների մասին չեմ խոսում:

-Պարոն Աղազարյան, կարծես թե չեք էլ բացառում անվստահություն հայտնելու գործընթացը, կարող ենք եզրակացնել՝ նման հարց ամեն դեպքում կա՞ Ձեր օրակարգում:

-Դա արդեն Ձեր ենթադրությունն է: Ինչպես էլ ձեւակերպեք հարցը, պատասխանը լինելու է նույնը:

-Պարոն Աղազարյան, ամեն դեպքում, եթե նման գործընթաց սկսեք, անհրաժեշտ է լինելու, որ ՔՊ-ից եւս պատգամավորներ միանան Փաշինյանի իմպիչմենթի գործընթացին, ի՞նչ եք կարծում, Ձեր նախկին թիմակիցներից կմիանա՞ն:

-Ես իմ առաջիկա պլանների մասին չեմ խոսում:

-Ունե՞ք Նիկոլ Փաշինյանին «այլընտրանք թեկնածուներ», ո՞ւմ եք տեսնում՝ որպես վարչապետի թեկնածուի:

-Ես, կարող է, չեմ տեսնում, բայց կան մարդիկ, որ ունեն իրենց թեկնածուին:

-Օրինակ, անուններ կասե՞ք:

-Ո՛չ, չեմ ասի:

-Իսկ հնարավո՞ր է՝ երբ պահը գա, Ձեր թեկնածությունը առաջադրեք վարչապետի պաշտոնում:

-Ես իմ պլանների մասին չեմ ուզում բարձրաձայնել:

-Պարոն Աղազարյան, արդեն տեւական ժամանակ է՝ տեղեկություններ են շրջանառվում, որ Գլխավոր դատախազը ԱԺ հերթական նստաշրջանի ժամանակ Ձեզ անձեռնմխելիությունից զրկելու հարցով գալու է խորհրդարան, ի՞նչ կասեք, Դուք ի՞նչ տեղեկություններ ունեք:

-Իհարկե հնարավոր է, պարտադիր չէ՝ հերթական նիստ լինի, կարող է եւ արտահերթ նիստ հրավիրվի:

-Իսկ կբավարարվե՞ն միայն Ձեզ անձեռնմխելիությունից զրկելով, թե՞ կտանեն կալանավորման:

-Դա պայմանավորված կլինի իմ վտանգավորության եւ հանցավորության չափերով:

-Իսկ իշխանությունները Ձեզ վտանգավոր համարո՞ւմ են, Փաշինյանը Ձեզ դիտարկո՞ւմ է իբրեւ մրցակից:

-Ես իրենց փոխարեն չեմ կարող պատասխանել:

-Պարոն Աղազարյան, իսկ Դուք Նիկոլ Փաշինյանին Ձեզ մրցակից համարո՞ւմ եք:

-Մենք ամեն ինչ անելու ենք, որ հերթական կամ արտահերթ ընտրությունների ժամանակ Նիկոլ Փաշինյանը չդառնա վարչապետ:

Հիշեցնենք, որ 2024 թվականի դեկտեմբերի 3-ին վարչության որոշմամբ Հովիկ Աղազարյանը հեռացվեց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից՝ պետական եւ կուսակցական նշանակության կոնֆիդենցիալ տեղեկատվության արտահոսքերի, ինչպես նաեւ հանրության բարոյական նորմերի կոպիտ խախտումների պատճառով:

Ավելի վաղ Հովիկ Աղազարյանը հայտնել էր, որ նախաձեռնող խմբի անունից լիազորված է հայտարարել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով սկսում են կուսակցություն հիմնադրելու գործնթաց: Կուսակցության անվանումը լինելու է «Միացյալ ազգային սոցիալիստական» կուսակցություն:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՔՊ-ԱԿԱՆՆԵՐՈՎ՝ ՀՌՈՄՈՒՄ

ՈՂՋ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԿՈՒՂԵԿՑԻ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ալեն Սիմոնյանը հերթական անգամ միայն իր թիմակիցների հետ գործուղման կմեկնի, այս անգամ՝ Իտալիա: ArmLur.am-ը տեղեկանում է, որ Ալեն Սիմոնյանը եւ ՔՊ-ական պատգամավորները փետրվարի 19-23-ը Հռոմում կմասնակցեն Միջերկրածովյան խորհրդարանական վեհաժողովի ամենամյա նստաշրջանին:

Խորհրդարանական պատվիրակության կազմում են Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավորներ Ծովինար Վարդանյանը, Բաբկեն Թունյանը, Վահագն Ալեքսանյանը: Մյուսները ԱԺ նախագահի աշխատակազմի աշխատակիցներ են՝ լուսանկարիչ, օպերատոր, մամուլի քարտուղար, արարողակարգի բաժնի մասնագետ ու ղեկավար, արտաքին կապերի վարչության մասնագետ ու ղեկավար, ԱԺ նախագահի խորհրդական Աշխեն Հայրապետյանը: Ալեն Սիմոնյանը, կարծես, վատ սովորություն է դարձրել միայն իր թիմակիցների հետ գործուղումների մեկնելը, այս անգամ էլ որեւէ ընդդիմադիր պատգամավոր ընդգրկված չէ պատվիրակության կազմում, թեեւ խորհրդարանական երկրներում պարտադիր է միջազգային աշխատանքներում ընդդիմադիր պատգամավորների մասնակցությունը:

Հիշեցնենք, որ փետրվարի 5-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ «Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանն ու իր թիմը մեկնել են Լյուքսեմբուրգ, այնտեղից էլ կգնան Բելգիա, իսկ ծախսերի մեծ մասը «հոգացել» է պետբյուջեն: Թե ինչ նպատակով՝ պաշտոնական փաստաթղթերում այդ մասին ոչինչ չկա, բայց փաստ է, որ ԱԺ նախագահի պատվիրակության կազմում ընդդիմադիրներ չկան, ոխերիմ թիմակիցներ չկան՝ այլ ընդամենը 2 ՔՊական պատգամավոր»:

«Ժողովուրդ»-ը ԱԺ պաշտոնական աղբյուրներից պարզել էր, որ Ալեն Սիմոնյանը փետրվարի 3-5-ը ինքն իրեն պաշտոնական այցով «գործուղել է» Լյուքսեմբուրգ, ապա 6-8-ը՝ Բրյուսել: ԱԺ նախագահի պաշտոնական պատվիրակության 11 հոգանոց կազմում ընդամենը 2 պատգամավորներ կան ՔՊ-ից՝ մեկը Արման Եղոյանը, մյուսը Սիմոնյանի նախկին օգնական Հասմիկ Հակոբյանը: Մյուսները ԱԺ նախագահի աշխատակազմի աշխատակիցներ են՝ լուսանկարիչ, օպերատոր, մամուլի քարտուղար, արարողակարգի բաժնի մասնագետ ու ղեկավար, արտաքին կապերի վարչության մասնագետ ու ղեկավար եւ խորհրդական՝ արդուկի գծով Աշխեն Հայրապետյանը:

«Թվարկվածներից միայն 5 հոգու ծախս է իր վրա վերցրել Լյուքսեմբուրգը, 6 հոգու գործուղման ծախսերը վճարվել է հերոս հարկատուների միջոցներով: Իսկ Բրյուսելի եռօրյա այցի համար ֆինանսավորումը ամբողջությամբ ապահովվել է հարկատուների հաշվին, պատվիրակությանն էլ միացել է եւս մեկ ՔՊ-ական պատգամավոր՝ Սարգիս Խանդանյանը, ով մեկ օր շուտ է հասնելու Բրյուսել: 12 անձի գործուղման հետ կապված ճանապարհածախսը, ներկայացուցչական ծախսերը, օրապահիկի եւ գիշերավարձի (3 գիշերվա՝ ըստ փաստացի կատարած ծախսերը հավաստող փաստաթղթերի) վճարումը կատարվել/ու է ՀՀ պետբյուջեի հաշվին», - պարզել էր «Ժողովուրդ»-ը:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԳՈՐԾԸ

Բաքվում փետրվարի 17-ին շարունակվել է Լեռնային Ղարաբաղի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի գործով շինծու դատավարությունը:

Ռուբեն Վարդանյանը կեղծ մեղադրանքներով ձերբակալվել է 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի ռազմական ագրեսիայից հետո: Ռուբեն Վարդանյանի գործով նախորդ դատավարությունը տեղի էր ունեցել փետրվարի 13-ին: Վարդանյանին նոր շինծու ու հորինված մեղադրանքներ են առաջադրվել՝ ադրբեջանցի դիվանագետների դեմ իբրեւ թե ահաբեկչական գործողություններ ֆինանսավորելու համար: Ռուբեն Վարդանյանը նախորդ դատավարության ժամանակ հրաժարվել է ադրբեջանցի փաստաբանից՝ շեշտելով, որ իր իրավունքները պաշտպանելու է միայն իր փաստաբան Ավրաամ Բերմանը:

Ադրբեջանն ապօրինի ձերբակալել եւ շինծու մեղադրանքներ է առաջադրել Լեռնային Ղարաբաղի նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանին, Բակո Սահակյանին, Արայիկ Հարությունյանին, Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի պաշտոնը զբաղեցրած Դավիթ Իշխանյանին, արտաքին գործերի նախկին նախարար Դավիթ Բաբայանին, Պաշտպանության նախկին նախարար Լեւոն Մնացականյանին, Պաշտպանության նախարարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանին, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանին: Կեղծ մեղադրանքներ են առաջադրվել նաեւ Վասիլի Բեգլարյանին, Էրիկ Ղազարյանին, Դավիթ Ալահվերդյանին, Գուրգեն Ստեփանյանին, Լեւոն Բալայանին, Մադաթ Բաբայանին, Գարիկ Մարտիրոսյանին, Մելիքսեթ Փաշայանին:

ԱԶԱՏՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Դատական կարգադրիչների ծառայության պետ Արման Ցոլակյանը աշխատանքից ազատման դիմում է գրել: ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ ազատումը կապ ունի որոշակի քրեական վարույթների հետ, իսկ թե նա ինչ կապ ունի այդ վարույթների հետ, կհայտնենք առաջիկայում:

ԲԴԽ-ից, ի պատասխան ArmLur.am-ի տեղեկությունների, հայտնեցին. «Նման բան չկա, պարզապես Դատական կարգադրիչների ծառայության պետը, անձնական պատճառներից ելնելով, աշխատանքից ազատման դիմում է գրել»:

ԿՄՆԱ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Հռոմի Ֆրանցիսկոս պապն առաջիկա օրերին էլ կմնա հիվանդանոցում: Այս մասին հայտնում է Սուրբ աթոռի մամուլի ծառայությունը: «Վերջին օրերին եւ այսօր կատարված թեստերի արդյունքներով պարզվել է, որ առկա է շնչառական տրակտի պոլիմիկրոբային վարակ, ինչը հանգեցրել է բուժման հետագա փոփոխության: Բոլոր հետազոտությունները ցույց են տալիս, որ բարդ կլինիկական պատկեր է, որը համարժեք հիվանդանոցային բուժում է պահանջում», - ասվում է հաղորդագրության մեջ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԵԿՆԵԼ ԵՆ ՌԻԱԴ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը եւ ՌԴ նախագահի օգնական Յուրի Ուշակովը մեկնել են էր Ռիադ՝ ՌԴ պետության ղեկավար Վլադիմիր Պուտինի հանձնարարականով: Այս մասին հայտնել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը: Փետրվարի 15-ին ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը եւ ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն հեռախոսազրույց են ունեցել, որում, մասնավորապես, հաստատել են փոխադարձ հարգալից երկխոսությունը վերականգնելու համար աշխատելու պատրաստակամությունը եւ պայմանավորվել կանոնավոր շփումների, այդ թվում՝ Պուտինի եւ Թրամփի հանդիպման նախապատրաստման մասին: Նախագահ Պուտինի հանձնարարությամբ ԱԳ նախարար Լավրովը եւ նախագահի օգնական Յուրի Ուշակովը թռչել էին Ռիադ»,- ասել է նա:

Նրա խոսքով՝ երեքշաբթի Ռիադում նրանք կհանդիպեն ամերիկացի գործընկերների հետ: Հանդիպումը նվիրված է լինելու առաջին հերթին ռուս-ամերիկյան հարաբերությունների ողջ համալիրի վերականգնմանը: «Այն նվիրված կլինի նաեւ ուկրաինական կարգավորման հնարավոր բանակցությունների նախապատրաստմանը եւ երկու նախագահների հանդիպման կազմակերպմանը», - ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղարը:

ԴԱՏՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ադրբեջանում այժմ դատում են ոչ միայն հայ գերիներին, այլեւ Հայաստանին: Այս մասին երեկ կայացած մամուլի ասուլիսում հայտնել է ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Նրա խոսքով՝ Բաքուն այս դատավարություններով կփորձի ցույց տալ, որ այն ամենը, ինչ տեղի է ունեցել Լեռնային-Ղարաբաղում, կապ չունի Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հետ, որ այդ ամենն ի սկզբանե Ադրբեջանի գլխին կազմակերպվել է Հայաստանի կողմից:

Նա սա անվանել է «Հայաստանի խնդիր», քանի որ Ադրբեջանը ցանկանում է վերջ դնել ինքնորոշմանը: «Դատավարությունների ժամանակ հայտնվում է իմ եւ ՀՀ երրորդ նախագահի անունը, իսկ Հայաստանի ներկա վարչապետի անունը՝ ոչ: Սա հարցեր էառաջացնում»,- ավելացրել է Քոչարյանը: Նա վստահություն է հայտնել, որ Հայաստանի իշխանությունների շահերից է բխում նաեւ, որ Բաքվում թատերական ներկայացում չլինի, քանի որ նրանք իրենց դիրքորոշմամբ պարտավոր են պաշտպանել երկրի շահերը:

«Իսկ ի՞նչ կարող է անել ընդդիմությունը գերիների վերադարձի հարցում: Իշխանություններն ունեն համապատասխան լծակներ, եւ նրանք կարող են ինչ-որ բան անել: Այս մարդկանց ճակատագիրը պետք է լինի բանակցությունների սեղանին եւ բարձրացվի ամեն հանդիպման, բայց դա տեղի չի ունենում»,- ընդգծել է երկրորդ նախագահը:

Նա հիշեցրել է, որ երբ Երեւանը միացավ Հռոմի ստատուտին, Հայաստանի իշխանությունները հայտարարեցին, որ հետո դատավարություններ են սկսելու Ադրբեջանի նախագահի եւ մյուսների դեմ՝ էթնիկ զտումների համար: «Ի վերջո, պարզվեց, որ դա միայն անհրաժեշտ էր, որպեսզի թույլ չտրվեր ՌԴ նախագահին Հայաստան գալ»,- եզրափակել է Ռոբերտ Քոչարյանը:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԿԵՂԾԻՔԸ

ՏԱՆ ՓՈԽԱՐԵՆ ՄԵՔԵՆԱ Է ՎԵՐՑՐԵԼ

Պետությանը «թալանը» հետ բերելու գործընթացում ոչ ամեն «հետ բերածն» է արդյունավետ եւ օգտակար պետության համար, ինչպես վարչապետ Փաշինյանն է պատկերացնում:



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը շաբաթ երեկոյան կրկին «#հատիկառհատիկ» հեշթեգով գրառում էր արել եւ գրել. «Դատարանի որոշմամբ (հաշտության համաձայնությամբ) որպես սեփականություն Հայաստանի Հանրապետությանն է փոխանցվել ապօրինի ձեռքբերված RANGE ROVER SPORT SUPERCHARGED 5.0 մակնիշի տրանսպորտային միջոցը՝ 2010 թվականի արտադրության: Սա գրում եմ ոչ թե նրա համար, որ վերադարձվածը ինչ-որ նշանակալի գույք է, այլ որովհետեւ՝ հատիկ առ հատիկը իրոք հատիկ առ հատիկ է»:

Վարչապետ Փաշինյանը չի նշել, թե ում մեքենան են «առգրավել»: Հարկ է նշել նաեւ, որ Փաշինյանը իմիտացիա է ստեղծում, թե իբրեւ հատիկ առ հատիկ ամեն բան վերադարձվում է պետությանը:

Պետությանը փոխանցված մեքենան ընդամենը 16 հազար ԱՄՆ դոլար արժե, իսկ կառավարական ընտանիքին սպասարկող մեքենաներն արժեն 120-150 հազար ԱՄՆ դոլար:

«Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մեսրոպ Առաքելյանը, Փաշինյանի գրառմանն ի պատասխան, գրել էր. «Այդ պաշտոնյայի մասով դատարանը ապօրինի գույք է համարել տունը եւ դրամական միջոցները, եւ տան փոխարեն պետությանն է փոխանցվել ապօրինի գույք չճանաչված ավտոմեքենան, ավտոտնակը եւ որոշակի գումար: Բայց սա չէ կարեւոր:

Դատարանը այդ որոշումը կայացրել է 2023թ. հոկտեմբերին, 2023թ. դեկտեմբերին մեքենան փոխանցվել է պետգույքի վարչությանը, եւ ահա պետգույքի վարչությունը միայն 14 ամիս հետո որոշել է այդ գույքը դնել աճուրդի: Այսինքն՝ 14 ամիս է տեւում մի մեքենա աճուրդով դնելը:

Եվ ամենակարեւորը: Դատարանը այդ մեքենան հաշվել է 10,200,000 դրամի փոխարեն, իսկ մեքենան աճուրդի է դրվում 5,500,000 դրամով: Երկու գնահատումն էլ արել են պետական կառույցները»:

Այսինքն, դեռ բավական չէ, որ մեքենան ապօրինի ճանաչված գույքի դիմաց ոչինչ է, մյուս կողմից՝ այս գործընթացը մեկնարկել է դեռ վաղուց, սակայն հասարակությանը գործողություն ցույց տալու համար Փաշինյանը հիմա է գրառում անում:

Նշենք, որ հեշտությամբ պետությանը վերադարձված ավտոմեքենան պատկանել է Երեւանի Էրեբունի վարչական շրջանի նախկին թաղապետ Արմեն Հարությունյանին, որը ԱԺ նախկին պատգամավոր Միհեր Սեդրակյանի քրոջ որդին է:

2023 թվականի հոկտեմբերի 13-ին Գլխավոր դատախազություն էր ստացվել Արմեն Հարությունյանի եւ նրան փոխկապակցված անձանց կողմից հայցապահանջն ընդունելու եւ գործի քննությունը հաշտությամբ ավարտելու վերաբերյալ դիմում: Արմեն Հարությունյանը եւ նրան փոխկապակցված անձինք պատրաստակամություն էին հայտնել Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով փոխանցել 1 միավոր անշարժ եւ 1 միավոր շարժական գույք՝ընդհանուր 16 մլն 400 հազար դրամ շուկայական արժեքով, ինչպես նաեւ 28 մլն 700 հազար դրամ: 2023թ. դեկտեմբերին մեքենան փոխանցվել էր պետգույքի վարչությանը, եւ ահա պետգույքի վարչությունը միայն 14 ամիս հետո որոշել է այդ գույքը դնել աճուրդի:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՉԻ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ⇨

ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի մամուլի խոսնակ Արման Մուսինյանը փոխանցել է. «Ի պատասխան լրատվամիջոցների հարցումների, տեղեկացնում եմ, որ նախագահը Տեր-Պետրոսյանը մտադիր չէ պատասխանել Ռոբերտ Քոչարյանի՝ ասուլիսում արտահայտած ստերին եւ հետին թվով մոգոնած հեքիաթներին»:

ԽՈՍՔ ՉԿԱ

ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը հայտարարել է, որ ռուս-ուկրաինական հակամարտությունը կարգավորելու ընթացքում Ուկրաինային տարածքային զիջումների մասին խոսք լինել չի կարող: Նրա խոսքով՝ ԽՍՀՄ-ի կազմավորման ժամանակ նման զիջումների է գնացել Խորհրդային Միության ղեկավարությունը: «Ցանկանում եք, որ կարգավորման բանակցությունների ընթացքում ինչ-որ մտորումնե՞ր հնչեն՝ կապված որոշ տարածքների զիջման հնարավորության հետ: Ինչպե՞ս զիջել. ռուս բնակիչներո՞վ, թե՞ առանց մարդկանց՝ միայն հազվագյուտ հողային մետաղներով», - ասել է Սերգեյ Լավրովը: Նա ընդգծել է, որ ԱՄՆ-ի ներկայացուցիչները, որոնք այժմ խոսում են այն մասին, թե ինչպես մոտենալ ուկրաինական ճգնաժամին, եւ դեռ պարզ չէ, թե նրանցից ով է լիազորված նախագահ Թրամփի կողմից Վաշինգտոնի վարչակազմի անունից խոսելու այս հարցով, նույնպես խոսում են փոխզիջումների մասին:

ՏՈՒԳԱՆՔ՝ ԵՐԿՐԱՊԱՀԻՆ

Դատարանը Նոյեմբերյանի երկրապահի ղեկավարի՝Յուրա Հարությունյանի մասով վճիռ է կայացրել: 2024 թվականին ապրիլի 23-ին Նոյեմբերյանում «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման ակցիայի ժամանակ «Երկրապահ Կամավորականների Միությանը» պատկանող մեքենան փորձել է Բագրատաշենի ճանապարհը փակած տավուշցիների վրա քշելով՝ բացել ճանապարհը: Սակայն տղամարդիկ կարողացել են կանգնեցնել մեքենան, ինչից հետո մեքենայից դուրս է թռել մի երիտասարդ ու բարձրանալով մեքենայի տանիքին՝ նետվել տավուշցիների վրա: Այս արարքի համար մեղադրյալի աթոռին էր հայտնվել Նոյեմբերյանի երկրապահի ղեկավար Յուրա Հարությունյանը, եւ դատարանը Յուրիկ Նարիմանի Հարությունյանին մեղավոր էր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքում եւ որպես պատիժ նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՏՆՕՐԵՆԻՆ

ԳՈՒՅՔԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ

Հայկ Հայկի Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իր ծառայողական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, կատարել է իրեն վստահված՝ իր տնօրինմանը փաստացի եւ իրավաբանորեն ազատ կամքով հանձնված խոշոր եւ առանձնապես խոշոր չափի գույքերի հափշտակություն:

Հայկ Հայկի Պետրոսյանը, հանդիսանալով «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության տնօրեն, 2017 թվականի մայիսի 11-ից մինչեւ 2019 թվականի օգոստոսի 30-ն ընկած ժամանակահատվածում հավատարմագրային կառավարում իրականացնող «Մեդիքալ Ինվեստ» ՍՊԸ-ի տնօրեն Գայանե Երվանդի Զախարյանին նույն բժշկական կենտրոնում համատեղության կարգով իր՝ թիվ 106 հրամանի համաձայն, ճառագայթային ֆունկցիոնալ գործիքային ախտորոշման բաժանմունքում հրամանագրել է աշխատանքի՝ որպես գերձայնային հետազոտության բժիշկ, կոնսուլտանտ այն դեպքում, երբ «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության հաստիքացուցակում նման հաստիք նախատեսված չի եղել եւ վերջինիս հրամանագրված լինելու ժամանակահատվածում նրա անվամբ լրացուցիչ հաշվարկվել եւ «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության բյուջեից վճարվել է 4.486.560 ՀՀ դրամ աշխատավարձ:

Գայանե Երվանդի Զախարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա օժանդակել է Հայկ Հայկի Պետրոսյանին՝ վերջինի կողմից իր ծառայողական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, իրեն վստահված՝ իր տնօրինմանը փաստացի եւ իրավաբանորեն ազատ կամքով հանձնված խոշոր չափի գույքի հափշտակություն կատարելուն:

Գարիկ Նիկոլայի Ավետիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա օժանդակել է Հայկ Հայկի Պետրոսյանին՝ վերջինի կողմից իր ծառայողական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, իրեն վստահված՝ իր տնօրինմանը փաստացի եւ իրավաբանորեն ազատ կամքով հանձնված առանձնապես խոշոր չափի գույքի հափշտակություն կատարելուն:

Հայկ Հայկի Պետրոսյանը, հանդիսանալով «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության տնօրեն, 2014 թվականի սեպտեմբերից մինչեւ 2019 թվականն ընկած ժամանակահատվածում որպես ավագ վարորդ հրամանագրված Գարիկ Նիկոլայի Ավետիսյանին ավտոմեքենա չի կցագրել, նրա անվամբ երթուղային թերթեր չեն լրացվել եւ վառելանյութ չի հատկացվել, իսկ Գ.Ավետիսյանը «Մեդիքալ Ինվեստ» ՍՊ ընկերության հավատարմագրային կառավարիչ Գայանե Զախարյանի կողմից վերջինին տրամադրված «Տոյոտա Ռավ 4» մակնիշի 70 SS 303 հաշվառման համարանիշի ավտոմեքենան շահագործել է Գ. Զախարյանի անձնական կարիքների համար, մինչդեռ հաշվարկվել ու «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության բյուջեից Գ. Ավետիսյանին է վճարվել 10.004.931 ՀՀ դրամ աշխատավարձ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿՐԱԿՈՑՆԵՐ ԵՆ ՀՆՉԵԼ

Փետրվարի 8-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Արարատի մարզում: Ժամը 22:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Արարատի մարզային վարչությունում եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արտաշատի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Իսակով փողոցի շենքերից մեկի մոտ հնչել են կրակոցներ, առկա են կրակված պարկուճներ, նույն փողոցի մեկ այլ շենքի բակում կայանված «BMW» մակնիշի ավտոմեքենայի բեռնախցիկի վրա առկա է կրակոցի հետք:

Դեպքի փաստով նույն օրը փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչություն, որտեղ ՀՀ քր. օր.-ի 297 հոդվածի 3-րդ մասի, 264 հոդվածի 1-ին մասի եւ 335 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Պարզվել է, որ Արարատի մարզի բնակիչներ 32-ամյա Լ. Հ.-ին, 19-ամյա Վ. Ա.-ի կողմից նեղացնելու հարցի շուրջ պարզաբանումներ կատարելու վերաբերյալ փետրվարի 8-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, Արտաշատ քաղաքի Իսակովի փողոցի շենքերից մեկի մոտ իրար հետ հանդիպել են Լ. Հ.-ն, Արարատի մարզի բնակիչներ 40-ամյա Գ. Կ.-ն, 33-ամյա Ա. Ա.-ն եւ Վ. Ա.-ն, վերջինիս պապ, Արարատի մարզի բնակիչ 68-ամյա Ս.Գ.-ն, 17-ամյա Թ. Բ.-ն, որի ժամանակ վերջիններս վիճաբանել եւ բացահայտ անհարգալից վերաբերմունք են ցուցաբերել հասարակության նկատմամբ, որի ընթացքում Վ. Ա.-ն իր մոտ պահվող դեռեւս չպարզված ապօրինի ատրճանակից կրակոցներ է հնչեցրել Իսակովի փողոցի շենքերից մեկի առաջին հարկում գործող վարսավիրանոցի ուղղությամբ, ինչին ի պատասխան էլ Ա. Ա.-ն, իր մոտ պահվող ապօրինի ատրճանակից նույնպես հնչեցրել է կրակոցներ:

Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է գազային ատրճանակի չկրակված 2 փամփուշտ, գազային ատրճանակի 1 պարկուճ, «Մակարով» տիպի ատրճանակի գնդակ, «Մակարով» տիպի ատրճանակի 3 պարկուճ, «Մակարով» տիպի ատրճանակի չկրակված փամփուշտ, ինչպես նաեւ հայտնաբերվել է նույն փողոցի շենքերից մեկի բակում կայանված «BMW» մակնիշի ավտոմեքենա՝ բեռնախցիկի վրա կրակոցի հետքով, որը քննիչի որոշմամբ տեղափոխվել է Արարատի մարզային քրեական վարչության հատուկ պահպանվող տարածք:

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախատեսում է 2025 թվականի ապրիլի 15-ից մինչեւ հուլիսի 15-ը պահեստազորայինների վարժական հավաքներ անցկացնել, որոնց նպատակն է պահեստազորայինների ռազմական հմտությունների կատարելագործումը, վերապատրաստումը եւ մարտական պատրաստության մակարդակի բարձրացումը: Վարժական հավաքները կանցկացվեն պահեստազորի առաջին խմբի առաջին եւ երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական եւ սպայական կազմերի համար: Յուրաքանչյուր քաղաքացի հավաքներին ներգրավվելու է առավելագույնը 25 օրացուցային օր ժամկետով:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ԲԱՎԱՐԱՐՎԵԼ Է

Գլխավոր դատախազության՝ պետական շահերի պաշտպանության վարչության հայցադիմումը 2025 թվականի փետրվարի 12-ին Հակակոռուպցիոն դատարանի վճռով բավարարվել է: Այս մասին հայտնել են դատախազությունից: Դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի սեփականության իրավունքը կգրանցվի նույն համայնքում գտնվող 2 հողամասի նկատմամբ: Յուրաքանչյուր հողամասի մակերեսը 800 քմ է, շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը՝ շուրջ 1 միլիոն դրամ:

Հիշեցնենք, որ Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը հայցով դատարանից պահանջել էր անվավեր ճանաչել Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի եւ ֆիզիկական անձանց միջեւ 2017 թվականի նոյեմբերի 7-ին կնքված առուվաճառքի պայմանագրերն ու կիրառել անվավերության հետեւանքներ:

ԻՆՔՆԱՍՊԱՆ Է ԵՂԵԼ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Նոր Հաճնում ինքնասպան եղած արցախցու մարմին է հայտնաբերվել: Վերջինս 1937 թվականին ծնված Լ. Հ.-ն է, որը, ըստ նախնական վարկածի, շենքի բակի զրուցարանում տանիքից կախվելով՝ ինքնասպան է եղել:

Նա Արցախից բռնի տեղահանված էր ու որդուն կորցրել էր պատերազմում:

ՉԵՆ ՏՈՒԺԵԼ

Երեկ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության 9-11 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքում ավտոմեքենա է այրվում: Ժամանել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Կոտայքի մարզի գումարտակի 2-րդ վաշտի 2-րդ դասակի պարեկները՝ գումարտակի հրամանատար Լեւոն Բաղալյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Վահագն Կարապետյանի, գումարտակի ծառայության տեսուչ Կառլեն Բաղյանի, վաշտի հրամանատար Դավիթ Հովհաննիսյանի եւ դասակի հրամանատար Սահակ Գալստյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանազատել եւ ծառայություն են կատարել նույն վաշտի ավագ պարեկ Արմեն Ավետիսյանը եւ կրտսեր պարեկ Գարեգին Հակոբյանը:

Փրկարարները մարել են Եղվարդ-Ջորավան ավտոճանապարհի 1-ին կմ հատվածում այրվող, Կոտայքի մարզի 37-ամյա Հայկազ Ս.-ի վարած «Volkswagen» մակնիշի ավտոմեքենայում առաջացած կրակը, սակայն ավտոմեքենան վերածվել է մոխրակույտի:

Հրդեհի հետեւանքով, բարեբախտաբար, տուժածներ չկան:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 14-ից 17-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 235 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

«ՉԵՆ ԳՏՆՈՒՄ» ՄԵՂԱՎՈՐԻՆ

2020 թ.-ից Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից ապօրինի կերպով Աղստեւ գետի հունը փոխելու, գետի հունում երկար, մեծ բետոնե պատ կառուցելու հետեւանքով «Դենդրոպարկը» մնացել է առանց ոռոգման ջրի, ծառայգում չորացել են շուրջ 25 000 տնկի, 1500-ից ավելի հազվագյուտ ծառեր ու թփեր, որոնցից մոտ 250 տեսակը «Դենդրոպարկում» արդեն վերացել է: 2023թ. փետրվարի 2-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն (այժմ՝ նախկին) Լեւոն Գաբրիելյանի եւ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի միջեւ կնքվել է վարձակալության պայմանագիր, 5,7 հա տարածքը, որը «Դենդրոպարկի» մաս է, հատկացվել է գինու, կոնյակի գործարանին՝ հանգստի գոտու վերածելու նպատակով: «Արգելապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայությամբ է գտնվում Իջեւանի «Դենդրոպարկը»: Այդ ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Լեւոն Տեր-Ներսիսյանին հարցրել ենք՝ Իջեւանի գինու, կոնյակի գործարանն ունի՞ բուսաբան-մասնագետներ, որպեսզի նրանք այդ 5,7 հեկտար այգու հազվագյուտ, արժեքավոր ծառերի պահպանությունը եւ խնամքն իրականացնեն: Լեւոն Տեր-Ներսիսյանի պատասխանում նշված է. «Պայմանագրի 2-րդ կետի մյուս պայմաններով Վարձակալը պարտավոր է չիրականացնել կառուցապատման աշխատանքներ, չվնասել տարածքում աճող ծառաթփերն ու ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներն ու կենդանիները, ժամանակին կանխել բուսական եւ կենդանական աշխարհի վնասատուների ու հիվանդությունների տարածումը»:

Անտրամաբանական է, որ գինու գործարանը կարող է «ժամանակին կանխել բուսական եւ կենդանական աշխարհի վնասատուների ու հիվանդությունների տարածումը»: Իջեւանի գինու, կոնյակի գործարանը, առանց շինթույլտվության, հենապատ կառուցելու համար 2021թ. մարտի 29-ին տուգանվել է 200 հազար դրամի չափով. 2021թ. հուլիսի 14-ին երկրորդ անգամ է ենթարկվել վարչական պատասխանատվության՝ 2 միլիոն 500 հազար դրամի չափով: 2021թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 290 հոդվածի 1-ին մասով քրեական վարույթ է նախաձեռնվել, սակայն որեւէ մեկի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցված չէ: Քրեական գործով նշանակվել են փորձաքննություններ, քրեական գործը քննչական կոմիտեից փոխանցվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե: Իջեւանից հայտնում են, որ այդ գինու գործարանի հետ սերտ առնչություններ, բիզնես հետաքրքրություններ ունի Նիկոլ Փաշինյանի հետ երկար տարիներ ընկերություն անող Հայաստանի հայտնի օլիգարխներից մեկը: Իջեւանից հայտնում են նաեւ, որ Իջեւանի գինու, կոնյակի գործարանը մոտ երկու տարի առաջ գնել է գինու գործարանից ոչ հեռու գտնվող «Մարմար» ռեստորանը, վերջերս էլ գնել է այդ ռեստորանի հարակից տարածքում գտնվող հյուրանոցը եւ այնտեղ վերակառուցման աշխատանքներ է կատարում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՅՔԱՐԸ՝ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

ՔՊ-Ի ՈՒԺՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՄԵՄԱՏԵԼԻ ԵՆ

«Ժողովուրդ»-ը զրուցել է ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Կարեն Սարուխանյանի հետ:

-Պարոն Սարուխանյան, Գյումրու ընտրություններին մոտ մեկ ամիս է մնացել, տարբեր դեմքեր, որոնք Գյումրիում ճանաչում ունեն, գյումրեցիների կողմից սիրված են, իրենց թեկնածությունն առաջադրել են՝ Ռուբեն Մխիթարյան, Վարդան Ղուկասյան, Մարտուն Գրիգորյան եւ այլք: Ի՞նչ սպասումներ կան այս ընտրություններից, ՔՊ-ն ո՞ւմ է համարում իր հիմնական մրցակիցը:

-Քանի դեռ վերջնական ցանկ չկա, շատ բան չեմ կարող ասել, մենք մեր օրակարգով գնում ենք մասնակցելու ՏԻՄ ընտրություններին: Մենք բոլորին ենք համարում մրցակից, բայց ամբողջ խնդիրն այն է, որ մեր մոտեցման հիմքում մեր կատարած աշխատանքն է առավելապես. փորձելու ենք գյումրեցիներից վստահության քվե ստանալ, որպեսզի Գյումրիում իշխանություն դառնանք: Բոլոր թեկնածուները հավասար հնարավորություն ունեն, դե ՔՊ-ի ուժն ու հնարավորությունն անհամեմատելի են, մրցակցությունն ավելի շատ մյուս ուժերի մեջ է լինելու:

-Այսինքն՝ արդեն վստա՞հ եք, որ ՔՊ-ն հաղթելու է:

-Միանշանակ, մենք գնում ենք 50-ից ավելի քվե ստանալու եւ հաղթելու համար:

-Ի դեպ, տեղեկություններ կան, որ հաղթելու հարցում իշխանություններին օգնության է հասնելու քրեական ենթամշակույթը, եւ ընտրություններից առաջ ՔՊ-ն ոտքի է հանելու քրեական դեմքերի, որպեսզի ձայներ ապահովեն:

-Իշխանությունները, եթե նման բան անեին, հիմա քրեական հեղինակություններ թեկնածություն չէին դնի, հետեւաբար՝ իշխանությունները քրեական հեղինակությունների հետ առնչություն չունեն, ՔՊ-ն քրեական ենթամշակույթի դեմ պայքարել է, անգամ օրենք ունենք դրա համար:

-Կամ առհասարակ չեն պայքարել քրեական ենթամշակույթի դեմ, կամ էլ անարդյունք է եղել այդ պայքարը, քանի որ հիմա էլ թե՛ Երեւանում, թե՛ մարզերում պարբերաբար հենց քրեական դեմքերի մասնակցությամբ բազմաթիվ վեճեր ու միջադեպեր են լինում:

-Վեճեր բոլոր տեղերում էլ լինում են, անգամ ամենաժողովրդավար երկրում հանցագործություններ լինում են, պայքար է տարվում ամենախիստ միջոցներով:

-Պարոն Սարուխանյան, իշխանությունները, մասնավորապես՝ Գյումրու ավագանու անդամները, գյումրեցի պատգամավորները, անթույլատրելի ու վիրավորական խոսույթով են արտահայտվում ընդդիմադիրների նկատմամբ: Ինչո՞ւ, հնարավոր չէ՞ առողջ մրցակցություն:

-Իրենք քաղաքական անհատներ են եւ քաղաքական տեքստեր են ասում, այդտեղ որեւէ բան ցենզից դուրս չկա, եթե ցենզից դուրս է կամ վիրավորական, թեկնածուն նեղսրտել է, կարող է դիմել դատարան:

-Դե, հաճախ մեղադրում են, թե այս կամ այն թեկնածուն առնչություն ունի նախկին իշխանությունների հետ. ինչու միայն ՔՊ-ականը կամ իշխանության հետ փոխկապակցված մ՚նձը կարող է առաջադրվել:

-Ով է ասել՝ միայն ՔՊ-ն պետք է մասնակցի: Եթե չկարողանային մասնակցել, այսքան մասնակցություն չէր լինի, եթե այն իշխանությունը լինեինք, որ չթողնեինք կամ ճնշեինք, այսքան ակտիվ մասնակցություն չէր լինի: Սա փաստում է այն մասին, որ մենք ամեն ինչ անում ենք, որ արդար ընտրություններ լինեն: Բոլոր քաղաքական ուժերը, տեսնելով, որ մենք պահում ենք արդարությունը, մասնակցում են ընտրություններին, եւ գնում ենք գյումրեցու ձայնը խնդրելու, իսկ թե ում կընտրի գյումրեցին՝ մեկ ամիս ժամանակ կա:

-Պարոն Սարուխանյան, ՔՊ-ի թեկնածու Սարիկ Մինասյանը, որը նաեւ համայնքապետի պաշտոնակատարն է այս պահին, ի պաշտոնե հանդիպում է քաղաքացիների հետ, նվերներ բաժանում նրանց: Սա արդյոք ռեսուրսների չարաշահում չէ՞, ստացվում է՝ մրցակցային անհավասար պայմաններում են պայքարելու թեկնածուները:

-Էլի կան թեկնածուներ, որոնք որոշակի դիրք են զբաղեցնում Գյումրիում: Սարիկ Մինասյանը համայնքապետի պաշտոնակատարն է եւ իր գործառույթն է իրականացնում: Եթե բակային հանդիպումներ չաներ, հիմա պետք է դժգոհեին, որ Սարիկ Մինասյանը անգործության է մատնված: Նվերների բաժանում Սարիկ Մինասյանի կողմից չի եղել: Մարդիկ կարիքի մեջ են եղել, Սարիկ Մինասյանը խնդրել է՝ ովքեր ի վիճակի են՝ օգնեն այդ մարդկանց:

-Այդ նվերներն էլ Սարիկ Մինասյանի անունից են տրվել քաղաքացիներին:

-Սարիկ Մինասյանի անունից չեն տրվել. հիմա ինձ էլ մարդիկ տարբեր հարցերով դիմում են, շատ բաներ ես ինքս չեմ կարողանում լուծել, այդքան հնարավորություն չեմ ունենում, դիմում եմ այլոց, որ օգնեն մարդկանց: Նույն տրամաբանությամբ էլ լինում են գործարարներ, կազմակերպություններ, որոնց միջոցով լուծվում է հարցը, որից եւ օգտվել է պարոն Մինասյանը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՇՈՏՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ ԵՆ

Երեկ Հակակոռուպցիոն դատարանում դատավոր Վահե Դոլմազյանի նախագահությամբ շարունակվում էր Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) փոխնախագահ, խորհրդարանական խմբակցության ղեկավար Արմեն Աշոտյանի շինծու բեռների վարույթի քննությունը:

Դատական նիստում հարցաքննվում էր ԵՊԲՀ տնտեսական վարչության պետ Սամվել Բարոյանը: Մյուս վկան՝ Վաչիկ Սաղաթելյանը, թեեւ պատշաճ ծանուցվել է, սակայն դատական նիստին չէր ներկայացել: Դատավոր Վահե Դոլմազյանի հարցին՝ ճանաչո՞ւմ է արդյոք վկան Արմեն Աշոտյանին, պատասխանել է՝ Աշոտյանին ողջ Հանրապետությունն է ճանաչում:

Դատավորը հետաքրքրվել է՝ ծանո՞թ է արդյոք վկան գործի հանգամանքներին, ապա ի պատասխան վկայի հստակեցմանը, թե որ հանգամանքների մասին է խոսքը, սկսել է ներկայացնել գործը՝ տեղեկացնելով, որ խոսքը չարաշահումների մասին է: Սամվել Բարոյանն ասել է, որ պատկերացում չունի ինչ չարաշահման մասին է խոսքը: «Ես ինչքան աշխատել եմ, չեմ նկատել որեւէ չարաշահման դեպք»,-ասել է վկա Բարոյանը: Այնուհետեւ վկային հարցեր է ուղղել հանրային մեղադրողը: Վկան ասել է, որ նախկին հանգստյան տունը վթարային էր, իմաստ չի եղել ներդրում անել: Վկային հարցեր է ուղղել Արմեն Աշոտյանի պաշտպան Ռուբեն Մելիքյանը: «Նշեցիք՝ Ձեր աշխատելու ժամանակահատվածում ԵՊԲՀ-ն ունեցել է 2 պանսիոնատ՝ Սեւանի ու Դիլիջանի, մինչեւ ե՞րբ է աշխատել Դիլիջանի հանգստյան գոտին: 2015թ.-ին պատկանո՞ւմ էր բժշկանին, հիշո՞ւմ եք՝ ում է հանձնվել»,-հարցին Բարոյանը պատասխանել է, որ չի հիշում:

Վկան նկատել է նաեւ, որ որպես տնտեսական վարչության պետ՝ պարտավորություն ուներ խնայելու համալսարանի միջոցները: Շենքը վատ վիճակում է եղել, իմաստ չի եղել ներդրում անել: Ըստ նրա՝ եթե «Ծովասար» հանգստյան գոտուց գույքը գաղտնի ձեռք բերելու միտում լիներ, նախնական գնահատում անելու դեպքում իմաստ չէր ունենա ռեկտոր Նարիմանյանի հանձնարարականը: Հաջորդիվ վկային հարցեր է ուղղել դատավոր Վահե Դոլմազյանը:

«Դուք Աշոտյանին ճանաչում եք որպես պաշտոններ զբաղեցրած անձի՞, թե՞ որպես համալսարանի հետ կապ ունեցող անձի» հարցին՝ վկա Բարոյանը պատասխանել է՝ Արմեն Աշոտյանին ճանաչում է որպես ակտիվ քաղաքական գործչի, կրթության նախարարի, բուհի բոլոր միջոցառումների ակտիվ մասնակցի եւ հոգաբարձուների խորհրդի նախագահի»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 33 պատահար. 1 մարդ զոհվել է, 13-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԵՑՎԵԼ Է

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Երեւանի կենտրոնի տեսուչները «Հրաշամանուկ» ՍՊԸ-ին պատկանող մանկական զարգացման կենտրոնի խոհանոցում (ք. Երեւան, Նանսենի փ.) անցկացրած ստուգման ընթացքում պարզել են, որ արտադրական գործընթացներն այստեղ իրականացվում են սննդամթերքի հիգիենային ներկայացվող սահմանված պահանջների խախտմամբ:

Մասնավորապես՝

խոհանոցում գտնվող սննդի պահեստային հատվածի պատերի մակերեւույթները պատված չեն եղել անջրանցիկ, լվացվող նյութերով,

խոհանոցի առաստաղը եղել է վնասված, առկա է եղել կեղտի կուտակում, բորբոսի առաջացում եւ մասնիկների թափվելու հնարավորություն,

լվացարանի տակի դարակաշարը, ինչպես նաեւ սնունդ մշակելու համար նախատեսված սեղանը չեն պահվել նորոգ վիճակում, պատրաստված չեն եղել հարթ, մաքրվող, քայքայամաշման չենթարկվող նյութերից:

Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ կենտրոնի խոհանոցի արտադրական գործունեությունը կասեցվել է, հայտնաբերված խախտումները վերացնելու համար սահմանվել է ժամկետ:

ԱՆՄԽԻԹԱՐ ՎԻՃԱԿ

ՆԳՆ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված էր 30 տոկոսով օպտիմալացնել ձերբակալվածների պահման վայրերը: Փետրվարի 17-ից դադարեցվել է Ապարանի եւ Տաշիրի ձերբակալվածների պահման վայրերի գործունեությունը: Ըստ այդմ, ձերբակալվածների պահման 33 վայրերից 11-ի գործունեությունն այս պահին արդեն դադարեցվել է, գործում է 22 ՁՊՎ: Փոփոխության համար հիմք է ընդունվել 2022-2023 թթ. տվյալների ուսումնասիրությունը. օպտիմալացվել են այն ՁՊՎ-ները, որոնց դեպքում առկա էին անմխիթար վիճակ եւ ոչ բարվոք պայմաններ, հաշվի են առնվել նաեւ ՁՊՎ-ների ծանրաբեռնվածությունը եւ հարակից վայրերում այլ ՁՊՎ-ների առկայությունը:

ԵՂԱՆԱԿՆ ԱՅՍ ՇԱԲԱԹ

Նախորդ ուրբաթ օրը տեղացած ձյունը շատերի համար անսպասելի էր, շատերի համար նույնիսկ տհաճ անակնկալ: Իսկ ինչ եղանակային կանխատեսումներ կան այս շաբաթվա համար: Այսօր՝ փետրվարի 18-ին եւ 19-ին սպասվում է առանց տեղումների եւ արեւոտ եղանակ: Չնայած նրան, որ շաբաթվա առաջին երեք օրերը ջերմ ու հաճելի են լինելու, հաջորդիվ այդ ջերմությունը այդքան էլ չի պահպանվի: Փետրվարի 19-ին՝ կեսօրից հետո, 20-22-ը, սպասվում է ձյուն, 20-ի գիշերը, 21-ի ցերեկը՝ ինտենսիվ: Օդի ջերմաստիճանը փետրվարի 17-18-ի ցերեկն աստիճանաբար կբարձրանա եւս 2-3 աստիճանով, փետրվարի 20-22-ը աստիճանաբար եւ գիշերը, եւ ցերեկը կնվազի 10-14 աստիճանով: Նշենք, որ այս պահի դրությամբ չկան փակ ավտոճանապարհներ, սակայն վարորդներին խորհուրդ է տրվում երթեւեկել ձմեռային անվադողերով:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՑ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՐԱՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավոր Գառնիկ Դանիելյանն անդրադարձել է վիրահայ մեր հայրենակիցներին: Նա նշել է. «Վիրահայ մեր հայրենակիցների համար օգտակար մի քանի տեղեկություն՝ պայմանավորված վերջին փոփոխություններով.

Վրաստանում ապրող, Վրաստանի քաղաքացի մեր հայրենակիցները սեփական վրացական պետհամարանիշով մեքենայով կարող են հատել ՀՀ սահմանը, լրացնել մաքսային մուտքի հայտարարագիրն ու 1 տարի մնալ ՀՀ տարածքում: Միաժամանակ ՀՀ քաղաքացիություն ունենալը որեւէ կերպ չի խանգարի նրանց այս ընթացակարգից օգտվելու համար:

Վրաստանում ապրող, Վրաստանի քաղաքացիություն չունեցող, այլ երկրի (ՀՀ, ՌԴ եւ այլն) քաղաքացի հանդիսացող մեր հայրենակիցները սեփական վրացական պետհամարանիշով մեքենայով կարող են հատել ՀՀ սահմանը, լրացնել մաքսային մուտքի հայտարարագիրն ու 1 տարի մնալ ՀՀ տարածքում: Ուշադրություն. այս դեպքում վերջիններիս համար անհրաժեշտ կլինի մաքսային մուտքի հայտարարագրման ժամանակ ներկայացնել նաեւ Վրաստանում մշտական կամ ժամանակավոր կացության իրավունքի վկայական: Այս կարգը սահմանվեց 2024 թվականի սեպտեմբերից սկսած՝Yerkir.am կայքի խմբագիր, ջավախահայ Վահե Սարգսյանի կողմից ՊԵԿ-ին ներկայացված խնդրի եւ առաջարկների հիման վրա: Հուրախություն այս խմբի մեջ մտնող մեր հայրենակիցների՝ նշեմ, որ վերջին օրերին ՊԵԿ-ի կողմից հաստատված կանոններով՝ այս դեպքում (Վրաստանում կացության քարտի հիման վրա մուտք գործելու դեպք) եւս մեր հայրենակիցները կարող են ՀՀ տարածքում իրենց մեքենան շահագործել մինչեւ մեկ տարի: Այս ընթացակարգով սահմանված ժամկետը կրկին հավասարեցվել է Վրաստանի քաղաքացիների ժամկետին (մինչ այս 15 օր էր այն):

Վրաստանում ապրող մեր հայրենակիցները, ովքեր միաժամանակ ունեն նաեւ ՀՀ քաղաքացիություն, Վրաստանի քաղաքացիության անձնագրով կամ Վրաստանում կացության իրավունքի քարտով ՀՀ տարածք մուտք գործելիս վրացական պետհամարանիշերով իրենց մեքենաները առայժմ չեն կարող վարել վրացական վարորդական իրավունքի վկայականներով: Ցավոք, գործող կարգի հիման վրա մեր հայրենակիցները դեռ ենթակա են տուգանման: Խնդիրը բարձրաձայնելուց հետո ՆԳ նախարարությունը հայտարարեց, որ նախատեսվում է վրացական վարորդականներով երթեւեկելու մինչեւ մեկ ամիս ժամկետ սահմանել: Այս ժամկետը բավարար չէ, եւ ձգտելու ենք հասնել նրան, որ կամ այն դառնա անժամկետ, կամ առնվազն հավասարեցվի մեքենաների շահագործման թույլտվության ժամկետին (1 տարի):

Նշված խմբերին պատկանող վրաստանաբնակ մեր հայրենակիցները կարող են Վրաստանի այլ քաղաքացու սեփականություն հանդիսացող մեքենայով եւս նշված ընթացակարգերով մուտք գործել Հայաստանի Հանրապետություն՝ լիազորագրի հիման վրա»:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄ

Փետրվարի 7-ին թունավորման դեպք է տեղի ունեցել Արագածոտնի մարզում: Ժամը 20:10-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Աշտարակի բաժնում տեղեկություն է ստացվել, որ մարզի գյուղերից մեկից 3 հոգի անհայտ ծագման թունավորմամբ դիմել են բուժօգնության, իսկ քիչ անց շտապօգնության ավտոմեքենայով նույն հասցեից բուժօգնության են տեղափոխվել եւս 3 հոգի: Օպերատիվորեն հիվանդանոց է մեկնել ոստիկանության Աշտարակի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետի տեղակալի գլխավորությամբ: Արդեն հիվանդանոցում ոստիկանները պարզել են, որ բուժօգնության դիմած քաղաքացիներն են Արագածոտնի մարզի բնակիչներ 30-ամյա Թ. Ն.-ն, 11-ամյա Կ. Ա.-ն, 8-ամյա Լ. Ա.-ն, 49-ամյա Լ. Վ.-ն, 5-ամյա Մ. Ա.-ն եւ 20-ամյա Ն. Գ.-ն: Պարզվել է նաեւ, որ նշված անձինք թունավորումը ստացել են նույն օրը՝ ժամը 19:30-ի սահմաններում, գյուղերից մեկում՝ խոհանոցում առկա հեղուկ գազի 5 լ. տարողությամբ տարայից՝ գազի արտահոսքի հետեւանքով: Դեպքի փաստով ոստիկանության Աշտարակի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչություն:

ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

Պեկ-ը ներկայացրել է մաքսանենգության եւ մաքսային կանոնների խախտման դեպքերը շաբաթվա կտրվածքով.

Մաքսային ծառայողները տրանսպորտային միջոցից հայտնաբերել են չհայտարարագրված ոսկենման զարդեր

Օդային ճանապարհով փորձ է արվել ներմուծել առանց հայտարարագրման 15,000 ԱՄՆ դոլար գումար:

Հայտնաբերվել են մաքսային հսկողությունից թաքցված ծխախոտի խմբաքանակներ:

Չհայտարարագրված թարմ լոլիկի եւ մանդարինի ներկրման փորձերը կանխվել են, մաքսային անցակետ ժամանած բեռնատարում եղել են չհայտարարագրված 180 կգ ընդանուր խնամքի պարագաներ:

1 ՏՈՆԱԿԱՆ ՕՐ

Մարտ ամսին 1 տոնական օր կա: «Տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ մարտի 8-ը նշվում է որպես կանանց տոն: Այն ոչ աշխատանքային օր է: Նշենք, որ այս տարի մարտի 8-ը շաբաթ օր է: Ի դեպ, Աշխատանքային օրենսգրքի 147-րդ հոդվածի համաձայն՝ ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերի նախօրյակին աշխատանքային օրվա տեւողությունը կրճատվում է մեկ ժամով, բացառությամբ կրճատ եւ ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով աշխատող աշխատողների: Այսինքն՝ մարտի 7-ին աշխատանքային օրվա տեւողությունը կրճատվում է մեկ ժամով: Բացի այդ, մարտի 3-ին մեկնարկում է Մեծ պահքը: Մարտի 2-ի հավատացյալները տոնում են Բուն Բարեկենդանը:

ՎԵՐՔՆԱԺԱՄԿԵՏԸ ՓԵՏՐՎԱՐԻ 21–Ն Է

2025 թվականի հունվար ամսին մատակարարված (վերահաշվարկված) բնական գազի եւ գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման մատուցված ծառայության արժեքի վճարման վերջնաժամկետը 2025 թվականի փետրվարի 17-ն է: Այս մասին հայտնում են «Գազպրոմ Արմենիա» ընկերությունից:

Փետրվարի 17-ից հետո 3 օրվա ընթացքում վճարում չկատարած բաժանորդների գազամատակարարման դադարեցման աշխատանքները կսկսվեն փետրվարի 21-ից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԵՎՐԱՏԵՍԻԼԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

ՈՎՔԵՐ ԵՆ ՆՐԱՆՔ ԵՎ ԻՆՉՈՎ ԵՆ ՀԱՅՏՆԻ

Երկու օր առաջ Հանրային հեռուստաընկերության եթերում որոշվեց, թե ով է ներկայացնելու Հայաստանը «Դեպի Եվրատեսիլ» երգի մրցույթում Շվեյցարիայի Բազել քաղաքում: Քվեարկությունների արդյունքում պարզ դարձավ, որ Հայաստանը «Դեպի Եվրատեսիլ» մրցույթում ներկայացնելու է Պարգը: Որքան էլ այդ փաստն ուրախալի է շատերի համար, միևնույն ժամանակ նաեւ տխրեցրել է մնացած մասնակիցների երկրպագուներին:

Գանք ամենասկզբից:

Ի սկզբանե եղել են կարծիքներ, որ երգի մրցույթին պետք է մասնակցեր Աթենա Մանուկյանը, ով 2020 թվականի կորոնավիրուսի պատճառով այդպես էլ չմասնակցեց «Դեպի Եվրատեսիլին»: Շատ երկրպագուների պնդմամբ՝ 2020-ին չմասնակցելու պատճառով էլ պետք է Աթենան ներկայացներ Հայաստանը մրցույթում, իսկ այս արդյունքները անարդար կազմակերպելու հետեւանք են: Բայց ունենք այն, ինչ ունենք:

Մրցույթի քննադատներից շատերը, որոնք «Դեպի Եվրատեսիլը» համարում են զուտ քաղաքական շոու, այն կարծիքին են, որ այս տարի մասնակիցների մեծամասնությունը անհայտ դեմքեր էին:

Հանդիսատեսների համար փոքր-ինչ անհայտ էին նաեւ Գեւորգ Հարությունյանը, Միլենա Միրիջանյանը, «Սեւագիր» խումբը, «Altsight» խումբը, որոնց մասին ինֆորմացիան քիչ է անգամ համացանցում: Չնայած այն հանգամանքին, որ թե՛ արտիստները, թե՛ խմբերը ունեն վոկալային հիանալի հմտություններ, հաղթել են տարբեր մրցույթներում եւ ունեն հետաքրքիր երգեր, այնուամենայնիվ հանրության որոշ մասի կարծիքով՝ նրանք Եվրատեսիլ երգի մրցույթի համար չէին:

Անցնելով մնացած մասնակիցներին՝ նշենք, որ շատերի համար անսպասելի էր Արսեն Գրիգորյանի եւ Կամիլի մասնակցությունը մրցույթին: Ի դեպ, շատերի կարծիքով, Կամիլը Արսեն Գրիգորյանի կերտած հայտնի Կամիլն էր, սակայն անակնկալները այլ էին: Շատ երկրպագուների տխրեցրեց Արսեն Գրիգորյանի չանցնելը, սակայն այն հանգամանքը, որ երգիչը փայլել է բեմում՝ անհերքելի փաստ է:

Ֆլորա Բիչախչյանը, ում կարելի է հիշել ռուսական «Ну-ка, все вместе!» երգի մրցույթից, նույնպես հրաշալի ելույթ է ունեցել, սակայն կրկին քննադատների կարծիքով՝ երգը չէր համապատասխանում մրցույթի ստանդարտներին:

Եվրատեսիլի առավել շատ քննարկված դեմքեր հատկապես տղաներն են, այդ թվում՝ Մելսը, ում պարի հեղինակը, ի դեպ, պարուհի Վիկա Մարտիրոսյանն էր, ով վաղուց հանրայինով չէր ցուցադրվում: Ի դեպ, Մելսի երկրպագուները եւս շատ էին, սակայն դա ոչինչ չփոխեց:

Սիմոնը, ով ժյուրիի քվեարկությամբ առաջին հորիզոնականում էր, կարող էր ներկայացնել Հայաստանը, սակայն ամեն բան փոխել է հանդիսատեսի քվեարկությունը: Սիմոնը գրավել էր շատերի սրտերը, եւ այս ամենը եւս անարդարություն են համարում երկրպագուները:

Ջույգերից Անահիտ Հակոբյանն ու Գասոյան եւս պայթյունավտանգ իրավիճակ են ստեղծել բեմում: Դուետն իր ելույթով դեռ ամենասկզբից անտարբեր չի թողել երկրպագուներին եւ ուներ շանսեր՝ մասնակցելու Եվրատեսիլին: Հանդիսատեսի եւ քննադատների կարծիքով՝ Անահիտը կարծես Լիլիթ Հովհաննիսյանի կրկնօրինակը լինի, ինչը, ի զարմանս շատերի, վատ քննադատությունների չի արժանացել:

Ինչ վերաբերում է Անահիտ Ադամյանին, ով Աշոտ Ղազարյանի թոռնուհին է, նա եւս լավ ելույթ ունեցավ, սակայն կրկին քննադատների կարծիքով՝ նրա ձայնը «Եվրատեսիլի ձայն չէ», քանի որ բարակ է: Ի դեպ, երկրպագուները Անահիտին համարում են հայկական Արիանա Գրանդեն:

Այսպիսով, թե ինչ կլինի Եվրատեսիլում, ինչ արդյունքներ կբերի Պարգը եւ արդյոք ճի՞շտ էր նրա մասնակցությունը Եվրատեսիլին՝ կիմանանք հետեւելով զարգացումներին եւ նոր թեժ քննարկումներին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԻՆՉ ՃԱՆԱՊԱՐՀ Է ԱՆՑԵԼ ՊԱՐԳԸ

Փետրվարի 16-ին հայտնի դարձավ, թե այս տարի ով է ներկայացնելու Հայաստանը Եվրատեսիլ երգի մրցույթում: Մասնակիցները 12-ն էին, եւ պայքարը թեժ էր, սակայն Հայաստանի պատվիրակ դարձավ Պարգը, որը հանդես էր գալիս 01 համարի ներքո, եւ կներկայացնի Հայաստանը «Դեպի Եվրատեսիլ» երգի մրցույթում Շվեյցարիայի Բազել քաղաքում:

Իսկ ո՞վ է նա

Պարգը երգչի բեմական կեղծանունն է: Նրա իրական անունը Պարգեւ է, իսկ ազգանունը՝ Վարդանյան: Նա ծնունդով Գեղարքունիքի մարզի Հայրավանք գյուղից է, իսկ երաժշտական առաջին փորձերը սկսել է եկեղեցու երգչախմբից եւ մինչեւ 6 տարեկանը երգել հենց երգչախմբում: Պարզվում է՝ ՊԱՐԳ-ը տաղանդավոր է դեռ մանկուց: Փոքր տարիքում, երբ ընտանիքի հետ տեղափոխվել է Վոլգոգրադ, հաճախել է տեղի պետական թատրոնի եւ կինոյի ինստիտուտ եւ ավարտել «Թատերական արվեստ եւ դերասանություն» բաժինը:

Պարգեւն այնտեղ նաեւ համահիմնադրել է The Edge Chroncles խումբը, որն էլ 2017-2019 թվականներին հանդես է եկել ՀՀ-ում, ՌԴ-ում, Վրաստանում եւ Ուկրաինայում:

Իսկ ե՞րբ է երգիչը թողարկել իր առաջին երգը

2021 թվականին երգիչը թողարկել է իր առաջին երգը/սինգլը՝ «Գինին ու գրելը», իսկ 2022-ին, վերադառնալով Հայաստան եւ հաստատվելով մայրաքաղաք Երեւանում, հունիս ամսին բացել է ֆրանսիացի երգչուհի Ջազի համերգը Երեւանի «ՀԱՅԱ» փառատոնում: Երգիչ Պարգը, այդ թվականից սկսած, cover տարբերակով կատարել է Ռոզա Լինի երգերը, ով նույնպես ներկայացրել է Հայաստանը Եվրատեսիլում: Պարգը համագործակցել է նաեւ տաղանդավոր ու գեղեցիկ երգչուհի Բրյունետի հետ: Կարելի է համարել, որ երգչին հաջողություն են բերել նաեւ Եվրատեսիլին մասնակցած հայերը:

Նշենք, որ երգիչն ամուսնացած է: Պարգեւի կինը բլոգեր է եւ հայտնի է համացանցային տիրույթում: Վերջինս արցախցի բլոգեր Նանա Վարդանյանն է, ով հայտնի է իր արցախյան բարբառի կոնտենտով: Ջույգն ամուսնացել է 2024 թվականի օգոստոսի 11-ին:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Կինոյի եւ հեռուստատեսության բրիտանական ակադեմիան հայտնել է 78-րդ մրցանակաբաշխության հաղթողներին: Մրցանակաբաշխության ընթացքում ամենաշատ մրցանակների են արժանացել «Կոնկլավ» եւ «Բրուտալիստը» ֆիլմերը: Գերմանացի ռեժիսոր Էդվարդ Բերգերի «Կոնկլավ» ֆիլմը 4 մրցանակ է տարել, այդ թվում՝ լավագույն ֆիլմ, լավագույն բրիտանական ֆիլմ, լավագույն ադապտացված սցենար եւ լավագույն մոնտաժ անվանակարգերում: Ամերիկացի կինոռեժիսոր Բրեյդի Քորբեթի «Բրուտալիստը» ֆիլմը նույնպես 4 մրցանակի է արժանացել: Քորբեթը ճանաչվել է լավագույն ռեժիսոր, Էդրիեն Բրոուդին՝ լավագույն դերասան: Ֆիլմը նաեւ արժանացել է լավագույն օրիգինալ սաունդթրեք եւ լավագույն օպերատորական աշխատանք մրցանակներին:

ՄԱՐՔԱԿԱՆ

ԽՈՍԵԼ Է ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Պորտուգալիայի ազգային հավաքականի եւ «Միլանի» հարձակվող Ժոաո Ֆելիքսը, որի իրավունքները պատկանում են Լոնդոնի «Չելսիին», խոսել է «ռոսոներիների» հարձակվող Ռաֆայել Լեաուի հետ հարաբերությունների մասին: «Ինչպե՞ս են գործերը Լեաուի հետ: Շատ լավ՝ թե՛ խաղադաշտում, թե՛ դրանից դուրս: Մենք լավ ենք իրար հետ: Ես իսկապես հաճույք եմ ստանում նրա հետ խաղալուց, քանի որ նա ինձ տարբեր տարբերակներ է առաջարկում: Եթե ես ճնշման տակ եմ, նա ինձ միշտ լրացուցիչ հնարավորություն է տալիս: Ինձ դուր է գալիս խաղալ նրա հետ եւ ունենալ նրան իմ կողքին», - ասել է Ֆելիքսը:

Հիշեցնենք, որ պորտուգալացի ֆուտբոլիստը մինչեւ ընթացիկ մրցաշրջանի ավարտը վարձավճարով հանդես կգա իտալական ակումբում: Հայտնի է դարձել նաեւ, որ «Միլանը» ուսումնասիրում է Ֆելիքսի ամբողջական տրանսֆերի հնարավորությունը:

ՎՍՏԱՀ ՀԱՂԹԱՆԱԿ Է ՏԱՐԵԼ

Պաուլիստայի առաջնության 11-րդ տուրում «Սանթոսը» 3:1 հաշվով վստահ հաղթանակ է տարել «Ագուա Սանտայի» նկատմամբ: Հանդիպումը կայացել է «Սանթոսի» «Վիլա Բելմիրո» մարզադաշտում: Գոլեր են խփել Տաչանոն, Գիլերմեն եւ Նեյմարը, որը վերադարձել է հարազատ ակումբ: Աստղային հարձակվողը 14-րդ րոպեին անվրեպ է իրացրել 11-մետրանոց հարվածը, ինչպես նաեւ գոլային փոխանցում է կատարել: Հյուրերի կազմում միակ գոլը խփել է Նետինյոն: Այս հանդիպումը նշանակալից էր Նեյմարի համար. սրանք նրա առաջին արդյունավետ գործողություններն էին Սաուդյան Արաբիայի «Ալ-Հիլալից» «Սանթոս» վերադառնալուց հետո: Ավելի վաղ «Ալ-Հիլալը» հայտարարել էր Նեյմարի հետ երկկողմանի համաձայնությամբ պայմանագիրը խզելու մասին: Ֆուտբոլիստը սաուդյան ակումբ է տեղափոխվել 2023 թվականին, սակայն վնասվածքների պատճառով անցկացրել է ընդամենը յոթ հանդիպում՝ դառնալով մեկ գոլի եւ երեք գոլային փոխանցման հեղինակ:

Նեյմարը «Սանթոսի» ակադեմիայի սան է, որտեղ նա խաղացել է 2009-ից 2013 թվականներին: Այս ընթացքում նա անցկացրել է 225 հանդիպում եւ խփել 136 գոլ բոլոր մրցաշարերում: Նա նաեւ դարձել է ակումբի բոլոր ժամանակների լավագույն ռմբարկուն:

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ Է ՏՐԱՆՍՖԵՐՈՎ

Անգլիական «Լիվերպուլը» հետաքրքրված է կատալոնական «Բարսելոնայի» ուրուգվայցի պաշտպան Ռոնալդ Արաուխոյի տրանսֆերով: Անգլիական ակումբը 25-ամյա խաղացողին դիտարկում է որպես Վիրջիլ վան Դեյկի հավանական փոխարինող, ում պայմանագրի ժամկետը լրանում է այս ամառ: «Բարսելոնան» պատրաստ է դիտարկել 60 միլիոն եվրոյի շուրջ առաջարկները:

● Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը փետրվարի 21-ին տեղի կունենա Երգեհոնային երաժշտության համերգ մրցույթը: Տոմսերի արժեքը՝2000, 3000, 4000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ավանդի փոխհատուցում ստանալու համար ավանդատուն հաշվառման համար ի՞նչ փաստաթղթեր է ներկայացնում միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն:

Ժենյա Հունանյան (75 տարեկան, թոշակառու)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ավանդի փոխհատուցում ստանալու համար ավանդատուն հաշվառման համար սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին) ներկայացնում է դիմում եւ հետեւյալ փատաթղթերը.

1) ավանդատուի անձը հաստատող փաստաթուղթ.

2) ավանդատուի հանրային ծառայությունների համարանիշը կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին.

3) ավանդատուի խնայողական գրքույկը (դրա առկայության դեպքում).

4) տեղեկանք «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունից (ավանդային հաշիվն սպասարկող մասնաճյուղի կառավարչի կողմից ստորագրված եւ մասնաճյուղի կնիքով կնքված)՝ ավանդատուի (նաեւ մահացած ամուսնու) բանկային հաշվի քարտում 1993 թվականի հունիսի 10-ի դրությամբ առկա տվյալների մասին.

5) ըստ անհրաժեշտության, ներկայացվում է նաեւ՝

ա. ամուսնության վկայական կամ տեղեկանք քաղաքացիական կացության ակտի գրանցման բաժնից՝ ամուսնության գրանցման մասին, առկայության դեպքում՝ մահացած ամուսնուն պատկանող խնայողական գրքույկը, ինչպես նաեւ ամուսնու մահվան վկայականը, եթե դիմումը ներկայացվել է մահացած ամուսնու անունով ներդրված ավանդի դիմաց փոխհատուցում ստանալու համար,

բ. ավանդատուի անունը եւ (կամ) ազգանունը փոխելու մասին քաղաքացիական կացության ակտերի սպասարկման կենտրոնի տված փոխման վկայականը, եթե անձնագրում եւ խնայողական գրքույկում նշված անունը, ազգանունը տարբեր են, իսկ ուղղելու դեպքում՝ ուղղման տեղեկանքը,

գ. Հայաստանի պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի վկայականը,

շարունակելի

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավանդատուին հասանելիք փոխհատուցումը հաշվարկելիս փոխհատուցման ենթակա ավանդների գումարներին ավելացվում են նաեւ այն ավանդների գումարները, որոնց համար նա որոշումներով սահմանված կարգով ստացել է փոխհատուցում եւ վճարման ենթակա փոխհատուցումը հաշվարկվում է ընդհանուր գումարի նկատմամբ՝ հաշվարկված փոխհատուցումից հանելով արդեն իսկ ստացած փոխհատուցումը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ի՞նչ կարգով է իրականացվում ծննդի պետական գրանցումը, ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում ծննդի պետական գրանցման համար, ի՞նչ ժամկետում է կատարվում ծննդի պետական գրանցումը, որքա՞ն է կազմում պետական տուրքի դրյուքաչափը:

Օվսաննա Մխոյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեխայի ծննդի ակտի գրառման մեջ ամուսնության մեջ գտնվող հայրը եւ մայրը գրառվում են որպես երեխայի ծնողներ՝նրանցից որեւէ մեկի դիմումի հիման վրա: Երեխայի ծննդի գրանցման համար ներկայացվում է գրավոր հայտարարություն, ծնողների (ծնողներից մեկի) եւ դիմողի անձը հաստատող փաստաթուղթ, երեխայի ծննդի ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկություններ լրացնելու համար հիմք համարվող փաստաթղթեր (օրինակ՝ ամուսնության վկայական, ամուսնալուծության վկայական, հոր մահվան վկայական), երեխայի ծնունդը հաստատող փաստաթուղթ, մասնավորապես՝ ծննդյան մասին սահմանված ձեւի փաստաթուղթ՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որտեղ տեղի է ունեցել ծնունդը:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ծննդի պետական գրանցման, ներառյալ վկայական տալու համար պետական տուրք չի գանձվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Նոր Նորքի 8-րդ զանգվածում

Նոր Նորքի 8-րդ զանգվածում գտնվող այս տարածքում «կայանել են» ավտոբուսներ, որոնք այլեւս չեն շահագործվում: Թե ինչ ճակատագիր է սպասվում դրանց, դժվար է գուշակել. կարելի է ենթադրել, որ ավտոբուսները կվաճառվեն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	-4 -11 -3 +2
	Կոտայքի լեռներ	-6 -10 -2 +2
	Կոտայքի նախալեռներ	-4 -9 0 +3
	Գեղարքունիք	-6 -11 -3 +1
	Լոռի	-7 -10 -1 +4
	Տավուշ	-3 -6 0 +2
	Արագածոտնի լեռներ	-9 -14 -2 +4
	Արագածոտնի նախալեռներ	-1 -3 -1 +5

	Արարատ	0 -5 +1 +4
	Արմավիր	-3 +1 +4 +6
	Վայոց ձորի լեռներ	-4 -7 +2 +4
	Վայոց ձորի նախալեռներ	-2 +2 +4 +6
	Սյունիքի հովիտներ	-6 -9 0 -4
	Սյունիքի նախալեռներ	0 +3 +7 +10
	ԼՂՀ	0 +2 +6 +8
	Երեւան	-1 -3 +7 +9

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.2.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*